«Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» ՀԿ-ի

EduArmenia կրթական նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց **2023**

Հետազոտական աշխատանք

<u>Թեմա՝</u> Ի՞նչպես ապահովել արդյունավետ ընթերցանություն տարրական դպրոցում

Հետազոտող ուսուցիչ՝ Նաիրա Սարգսյան

(Քաջարան, Վ. Սարոյանի անվ. թիվ 11 հիմնական դպրոց)

Հրազդան **2023**թ.

Բովանդակություն

Ներածություն	3
Գլուխ 1	5
Բացատրական ընթերցանություն, խնդիրներն ու նպատակները	5
Գլուխ 2	9
Բացատրական ընթերցանություն հիմնական բաղադրամասերը, կիրառումը	9
Ջրույց և զրույցի մեթոդիկան	10
Բնագրի ընթերցում	12
Բառային աշխատանք	16
Աշխատանք բնագրի շուրջ	18
Ամփոփում	22
Եզրակացություն	23
Օգտագործված գրականություն	24

Ներածություն

Ի՞նչ է ընթերցանությունը: Ընթերցանությունը խորհրդանիշների վերծանման բարդ ճանաչողական գործընթաց է՝ պահպանելով տեքստի ընկալելը և հասկանալը: Այն լեզվի յուրացման, հաղորդակցության, տեղեկության և գաղափարների փոխանակման միջոցներից մեկն է: Ընթերցանությունը տեքստի և կարդացողի միջև բարդ փոխազդեցություն է: Ո՞րն է այսօրվա տարրական դպրոցում ընթերցանության առջև դրված խնդիրը, ի՞նչ է պահանջում այն: Մեր ժամանակներում մեծ խնդիր է՝ ինչպես, ի՞նչ մեթոդներով հասնել ընթերցանության նկատմամբ երեխաների մեջ սեր, հետաքրքրություն, մոտիվացիա արթնացնելուն, քանի որ ապրում ենք այնպիսի դարաշրջան, երբ տեղեկատվական դաշտը, ինֆորմացիայի աղբյուրները բազմազան են: Ո՞րն է մեր՝ ուսուցիչներիս նպատակը. ամենառաջինը պետք է հասնենք նրան, որ երեխաների մեջ զարգացնենք ստեղծագործական մոտեցումը, քննադատական վերլուծությունը: Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ընթերցանությունում ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը մեկնաբանության ընթացքում: Ընթերցողը կարող է օգտագործել ընթերցանության տարբեր ռազմավարություններ՝ ընտրելով հարմարության նկատառումներից: Դպրոցում աշխատանքային տարիների փորձը ցույց է տվել,որ ընթերցումը անփոխարինելի միակ հմտությունն է, որն ուղղակիորեն ազդում է մտածողության զարգացման վրա: Այն վերլուծական կարողություններ զարգացնելու միջոց է, մարդու ամբողջական զարգացման նախապայման, որը պիտի զարգացնել՝ սկսած տարրական դպրոցից:

Ընթերցանությունը ենթադրում է երեխայի մտավոր, ճանաչողական և խոսքային գործունեություն: Վերջինս, ինչ խոսք, ամենաբարդն է կրտսեր դպրոցականի համար: Այն ներառում է գրավոր խոսքի ընկալում և վերարտադրում: Աշակերտներից պահանջվում է ընկալել գրքային բառը, խոսքը, արտահայտությունը և փոխարինել այն ինքնուրույն համարժեքներով:

Դա բարդ գործընթաց է: Սա այն կարևոր խնդիրներից է, որին բախվում է յուրաքանչյուր ուսուցիչ: Տեքստի բովանդակության ընկալումը միանգամից չի կարող զուգակցվել կարդալու հմտության ձևավորման հետ: Այդ է պատճառը, որ ուսուցման սկզբում նյութի բովանդակության ընկալումը հետ է մնում ընթերցման հմտությունից: Դրանց զուգակցումը երկարատև և ջանադիր աշխատանք է պահանջում: Մեր նպատակը հենց այդ աշխատանքի ճիշտ համադրումն է, հերթականության պահպանումը:

Այսպիսի մի խնդրի առնչվեցի 2-րդ դասարանի 1-ին կիսամյակում 2 աշակերտի հետ ընթերցանության գործընթացն իրականացնելու ժամանակ: Ազդող գործոնը հիմնականում եղել էր 1-ին դասարանի 2-րդ կիսամյակի հեռավար դասավանդումը՝ պայմանավորված համաճարակով: Սկզբում խնդիրը այդքան էլ մեծ չէր երևում, թվում էր՝ ժամանակի ընթացքում ամեն ինչ կընկնի իր տեղը: Ցավոք, նույնիսկ 2-րդ կիսամյակի ավարտին, փոփոխությունը տեսանելի չէր. աշակերտները, նրանցից մեկը ավելի շատ, դժվարանում էր կարդալ նույնիսկ փոքրածավալ ստեղծագործություններ: Հենց այդ ժամանակ էլ սկսեցի հետազոտել ընթերցանության այն կարևոր ու ժամանակակից մեթոդները, որոնք կարող էին նպաստել խնդրի հաղթահարմանը:

Տարրական դպրոցում ընթերցանության հետ կապված վերը նշված խնդիրները աստիճանական կարգով լուծելու համար պետք է կիրառել լուծման ժամանակակից, արդի մեթոդներ, հնարներ, որոնք կսովորեցնեն աշակերտներին քայլ առ քայլ մոտենալ ակնկալվող արդյունքին: Այստեղ հենց օգնության է գալիս բացատրական ընթերցանության մեթոդիկան, որն իմ կարծիքով այն անփոխարինելի միջոցն է, բազմաֆունկցիոնալ, ճկուն և ծավալուն մեթոդը, որը ճիշտ կազմակերպելով՝ յուրաքանչյուրս կարող ենք հասնել առավելագույնին:

Գլուխ 1

Բացատրական ընթերցանություն, խնդիրներն ու նպատակները

Ընթերցանության հմտությունը հաջողակ ուսման բանալին է: Դպրոցում ամեն օր մենք բախվում ենք մի շարք խնդիրների և բնականաբար մեր առջև դնում նպատակներ: Տարրական դպրոցում այդ նպատակներն ու խնդիրները տարբերվում են իրենց բնույթով: Ի՞նչ խնդիրների ենք բախվում և ինչ նպատակներ են հետապնդում տարրական դպրոցում ընթերցանության ուսուցման ժամանակ:

. Ընթերցանության որակական հատկանիշների պահպանմամբ ձևավորել և զարգացնել կարդալու կարողությունները, որն ակնհայտ պետք է երևա դասարանից դասարան տեղափոխվելիս:

. Բարեկիրթ խոսքի մշակույթի, հաղորդակցական կարողությունների ձևավորում:

. Ուսուցման հենց սկզբում պետք է մաքրել, հղկել, հարստացնել երեխաների ձեռք բերած բառապաշարը, զարգացնել կապակցված խոսք կառուցելու (գրավոր և բանավոր) ունակությունը:

. Ընթերցանության խնդիրներից է մայրենի լեզվից տարրական գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռք բերման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

. Զևավորել այնպիսի կարողություններ, որոնց շնորհիվ կարողանան ընթերցել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ՝ հասկանալով դրանց հիմնական միտքը, գաղափարը, կռահել ենթատեքստը, ըմբռնել հերոսների գործողությունների տրամաբանությունը, ընթերցածի շուրջ կատարել տարաբնույթ դատողություններ:

. Նպաստել շրջակա աշխարհի, իր բնակավայրի, այնտեղ ապրող մարդկանց զբաղմունքի մշակութային արժեքների մասին գիտելիքների ձեռքբերմանը:

.Կարևոր նպատակներից է նաև հայեցի մտածողության ձևավորումը, որին նպաստում է գեղարվեստական նյութերի ընթերցումը, լեզվական տարրական գիտելիքների և կարողությունների ձեռքբերումը:

. Լեզվամտածողության, վերլուծական, քննադատական մտածողության, ազգային հոգեկերտվածքի զարգացմանը նպաստելը:

.Երեխայի անձի զարգացումը ապահովելով՝ իրականացնել բարոյական, գեղագիտական, գաղափարական դաստիարակություն, նպաստել երեխայի ինքնահաստատմանը, ինքնադրսևորմանը, ձևավորել համագործակցային ունակություններ, համակեցության որակներ:

.Զևավորել տարաբնույթ աշխարհահանաչողական գիտելիքներ և պատկերացումներ շրջապատի, բնական և հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին:

.Պայմաններ ստեղծել մշակելու այնպիսի ունակություններ, որոնց շնորհիվ երեխաները ձեռք կբերեն իրենց իրավունքների և պարտականությունների մասին գիտելիքներ: Պետք է սովորեցնել սովորել, գնահատել սեփական և ուրիշների արժեքները (գիտելիքները, փորձը, ձեռքբերումները), գիտակցել մայրենի լեզվի և գրականության արժեքների ձեռքբերման կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Իհարկե խնդիրները, և ըստ այդմ էլ նպատակները շատ են, և 21-րդ դարում ընթերցանության միջոցով այդ նպատակներն իրականացնելու համար պետք է կիրառել ճկուն, դինամիկ և ժամանակակից մեթոդիկա: Բայց կան հիմնական մեթոդներ, որոնց ժամանակի շունչ տալով՝ կարելի է արթնացնել կարդալու ցանկությամբ հետաքրքրություն, և ինչպես ասել է Ջ. Գերշելը. «Մարդուն տվեք ընթերցանության ցանկությամբ սեր և այն բավարարելու համար միջոցներ, ու հազիվ թե ձեզ չհաջողվի նրան դարձնել երջանիկ»[1]:

[1] Ջ.Գյուլամիրյան, «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», 2015, էջ 102

Բացատրական ընթերցանության մեթոդը դիդակտիկական բազմաբնույթ ձևերի ու միջոցների մի համակարգ է , որի միջոցով կազմակերպվում են մայրենիի դասերը տարրական դպրոցում:

Ուսուցման սկզբնական փուլում մեծ ուշադրություն է դարձվում կարդալու, հատկապես հասկանալով կարդալու կարողությունների ձևավորմանը, որովհետև այս դեպքում ընթերցանությունը դառնում է անձի ճանաչողական հետաքրքրությունների, բազմաբնույթ պահանջմունքների բավարարման, բազմակողմանի զարգացման միջոց:

Մեր աշխատանքային փորձը ցույց է տվել, որ բնագրի առաջին ընթերցման ժամանակ աշակերտները ընթերցած նյութի բովանդակության մասին կազմում են մակերեսային պատկերացում: Մակերեսային կամ ոչ ճիշտ ընթերցումը տարրական դպրոցի հիմնախնդիրներից է : Այն իր հետ բերում է մյուս խնդիրները՝ բովանդակության ոչ ճիշտ, մակերեսային ընկալում, տեքստի շուրջ ոչ լիարժեք աշխատանքի ներգրավվում և իրականացում, ընթերցած տեքստի բովանդակության ոչ ամբողջական վերարտադրում և նմանատիպ այլ խնդիրներ: Այս բացը սկսվում է հենց տարրական դասարանից և այն ամբողջությամբ լրացնել հաջորդ տարիներին հնարավոր չէ:

Այս բոլոր խնդիրները ժամանակին կանխատեսելու, դրանցից խուսափելու համար պետք է ժամանակին տարվեն ճիշտ, մեթոդապես հագեցած, հետաքրքիր, բազմաբնույթ աշխատանքներ:

Այսպիսի աշխատանքներով հագեցած է հենց բացատրական ընթերցանության յուրաքանչյուր բաղադրիչ, որոնց ճիշտ մատուցման արդյունքում երեխաները կկարողանան իրենց համար կատարել բացահայտումներ, նորություններ, վերլուծություններ, ենթադրություններ:

Մեր օրերում դպրոցում, տարրական դասարանում գերխնդիրը երեխաների սեփական երևակայական մտածողության զարգացումն է, որ կարողանան շեղվել բնականոն ընթացքից: Երեխային պետք է հասկացնենք՝ ինչո՞ւ կարդալ, որն է նպատակը, պետք է հասկանա, որ ընթերցելով՝ ինքը կկապվի իր աշխարհի հետ:

Բավականին դժվար է կրտսեր դպրոցականին ուղղորդել, խրախուսել, հետաքրքրություն ձևավորել ընթերցման նկատմամբ:

Մեթոդներն ուսումնասիրելուն զուգահեռ փորձեցի այն կիրառել բնականաբար ամբողջ դասարանում՝ շեշտը դնելով մի փոքր հետ մնացող աշակերտների վրա: Նախ փորձեցի աշակերտների հետաքրքրությունը ուժեղացնելու համար սկզբնական զրույցն անցկացնել հենց իրենց հետ, որպեսզի ամբողջովին ներգրավվեին պրոցեսի մեջ: Ապա բնագրի 2-րդ ընթերցման ժամանակ յուրաքանչյուր պարբերության

ընթերցումից հետո հանձնարարում էի ասել դուր եկած բառը, բառակապակցությունը կամ նախադասությունը, ապա ընկերների օգնությամբ գտնում էին այդ նույնը տեքստի մեջ: Այսինքն նպատակը հենց այն էր, որ երեխան տուն գնար՝ նոր ուսումնասիրվող նյութի մեջ զետեղված բառերին ու բառակապակցություններին հնարավորինս ծանոթացած:

Նման խնդիրների բախվել եմ ոչ միայն ես, այլ ամենօրյա քննարկումների արդյունքում խնդիրը երևում էր նաև զուգահեռ դասարաններում: Դասավանդման բազմամյա փորձ ունեցող զուգահեռ դասարանի դասվարներից մեկը աշակերտների մեջ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու համար դասարանում ստեղծել էր ընթերցանության անկյուն, որտեղ նստում էին զույգերով (անպայման մեկը թույլ, մյուսը՝ ավելի արագ ընթերցող), զույգերի մեջ անցկացվում էր մրցույթ, նպատակը այն էր, թե վերջում ավելի արագ կարդացող աշակերտի ընթերցումից մյուս ընկերը քանի նոր բառ, բառակապակցություն կամ նախադասություն սովորեց: Այսինքն միանգամից կատարվում էր և՛ բնագրի ընթերցում, և՛ բառային աշխատանք, և՛ այդ ամենի ներկայացում:

Հաջորդիվ ներկայացվող ընթերցանության ուսուցման մեթոդական քայլաշարը, դրանց ճիշտ կազմակերպումը, մի քիչ ճկունությունը, խելացի մոտեցումը կնպաստեն հնարավորինս խուսափել ընթերցանության ուսուցման ժամանակ հանդիպող խնդիրներից:

Գլուխ 2

Բացատրական ընթերցանություն հիմնական բաղադրամասերը, կիրառումը

Բացատրական ընթերցանության մեթոդի բաղադրամասերն են՝

. զրույց

. բնագրի ընթերցում

. բառային աշխատանք

. աշխատանք բնագրի շուրջ

. պատմում

. ամփոփում

Այս բոլոր բաղադրամասերի հաջորդականությունը պահպանելը խիստ անհրաժեշտ է, քանի որ յուրաքանչյուր նախորդի հաջողված կիրառումը նախապայման է ստեղծում հաջորդ բաղադրիչի համար:

Ընդհանրապես գրագետ, ստեղծագործ անձի զարգացման համար շատ կարևոր է ընթերցողական կարողության ճիշտ ձևավորումը տարրական դասարանում:

Բացատրական ընթերցանության մեթոդիկայի առաջին բաղադրիչը, որը կիրառում ենք յուրաքանչյուր դասին և դասի ցանկացած փուլում, զրույցն է:

Զրույց և զրույցի մեթոդիկան

Զրույցը բարոյական դաստիարակության և ուսուցման մեթոդներից է: Այն կիրառում ենք սովորողի մտավոր գործունեությունն ակտիվացնելու համար: Զրույցի ընթացքում սովորողը կրկնում և ամրապնդում է անցած նյութը, ձեռ բերում նոր գիտելիքներ:Ի հայտ են գալիս սովորողի անհատական առանձնահատկությունները մշակվում են տրամաբանորեն մտածելու, փաստերի և երևույթների միջև նոր կապեր հաստատելու, ուշադիր լսելու, վիճելի հարցերին քննադատաբար մոտենալու և կոլեկտիվ ձևով լուծելու կարողություններ:

Զրույցը հիմնականում չենք իրականացնում խստորեն մշակված պլանով և ուսումնական պրոցեսում կիրառում ենք այլ մեթոդների հետ զուգակցված:

Ուսուցման ընթացքում զրույցի ժամանակ՝

. պետք է ճշտենք կրտսեր դպրոցականների ուսումնահաղորդակցական գործունեության դրդապատճառները,

. դասարանին կենտրոնացնենք ուսուցանվող թեմայի հիմնական ուղղությունների վրա,

. աշակերտները նոր տեղեկատվություն ձեռք բերեն զրույցի թեմայից,

. ձևավորենք գործնական և ընկերական բարեկիրթ փոխհարաբերություններ,

. ներկայացնենք ուսումնական խնդիրը՝ դասի նպատակները:

Ըստ նպատակների կարելի է իրականացնել զրույցի մի քանի տեսակներ.

. տեղեկատվական զրույց՝ նախապես որոշված ուսումնական նյութի բացատրություն, տարաբնույթ տեղեկությունների հաղորդում ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ,

. ներգործող զրույց՝ ուսուցչի կողմից տարաբնույթ հնարներով աշակերտների երևակայության զարգացում,

. համոզող զրույց՝ երբ աշակերտները իրենց զգացմունքների, հայացքների, համոզմունքների վրա ազդեցություն ունենալով ՝ կատարում են որևէ գործողություն կամ արարք

. իրադրությունային զրույց՝ ուսուցչի կողմից երկկողմանի հարցազրույցի

իրականացում որևէ իրադրության, իրավիճակի շուրջ:

Ըստ դասի ընթացքում իրականացման փուլերի, կարելի է իրականացնել

նախապատրաստական, ուղեկցող և ամփոփիչ զրույցներ:

Նախապատրաստական զրույցի գլխավոր նպատակը ուսուցանվող նյութի բովանդակության, հերոսների արարքներին գործողություններին նախապատրաստելն է, բայց այս փուլում ոչ մի դեպքում աշակերտներին չպիտի ծանոթացնենք տեքստի բովանդակությանը:

Ուղեկցող զրույցը իրականացվում է ստեղծագործության ընթերցմանը զուգահեռ:

Այն կիրառվում է դասի իմաստավորման փուլում, որի բովանդակությունը ուսուցանվող բնագիրն է՝ բաժանված մասերի: Այս զրույցի ընթացքում կարող ենք առանձնացնել նաև հենակետային, մագնիսական մտքեր, որն էլ կօգնի բնագիրը բաժանել մասերի, յուրաքանչյուր մասի համար մշակել համապատասխան աշխատանք:

Ամփոփիչ զրույցով ավարտում ենք յուրաքանչյուր դաս, այսինքն ամփոփում ենք ստեղծագործության հիմնական բովանդակությունը և գաղափարը: Այս զրույցի ընթացքում ընտրված հարցերը պետք է այնպիսին լինեն, որ երեխաներին ստիպեն մտածել, ստեղծագործել և ոչ թե տեքստից դուրս հանեն պատրաստի նախադասություններ:

Ըստ անցկացման ձևի կիրառում ենք զրույցի հարցազրույց, կատեխեզիսային, բացատրական և էվրիստիկ տեսակները:

Հարցազրույցի ժամանակ պետք է ունենանք նախօրոք մշակված հարցեր՝ հաշվի առնելով, որ հարցերին տրվող պատասխանները երեխաները կարող են իմանալ կամ շարադրել ոչ ստանդարտ ձևով: Եվ շատ հաճախ այդ պատասխաններին պետք է ընթացք տանք:

Կատեխեզիսային զրույցն անցկացվում է երկկողմանի, այսինքն՝ այն պետք է անցկացնենք արդեն ծանոթ բնագրի շուրջ: Այն կիրառում ենք իմաստավորման և կշռադատման փուլում, ինչպես նաև թեմայի ամփոփման ժամանակ: Բացատրական զրույցը կարելի է կիրառել այն ժամանակ, երբ երեխաները նոր տեղեկություն են ձեռք բերում ստեղծագործության վերաբերյալ: Այն ևս անցկացվում է իմաստի ընկալման փուլում:

Էվրիստիկ (գտնել, հայտնաբերել) զրույցի ժամանակ նյութը աշակերտներին ներկայացնում ենք ոչ թե պատրաստի ձևով, այլ աշակերտները հարցադրումների միջոցով գտնում են, հայտնաբերում գիտելիքներ, կատարում եզրահանգումներ: Զրույցի այս տեսակը նպաստում է աշակերտների ստեղծագործական մտքի աճին, սեփական տեսակետներ ունենալու կարողության զարգացմանը:

Ընդհանրապես, զրույցի տեսակն ընտրելիս, կարևոր է ոչ միայն նրա նպատակահարմարությունը, թե դասի տվյալ պահին ո՞ր տեսակը կարող ենք կիրառել, այլ կարևոր է նաև վարման ձևը, ձայնը, դիմախաղը, անգամ մեր դիրքն ու կեցվածքը: Զրույցի ժամանակ պետք է տեսողական կապ հաստատենք երեխայի հետ՝ նայելով նրա աչքերին:

Շատ կարևոր է, որ կարողանանք լսել ու ընդունել երեխայի մտքերն ու պատկերացումները երևույթի վերաբերյալ՝ առանց դրանք քննադատելու, գնահատելու, մերժելու կամ արժեզրկելու:

Բնագրի ընթերցում

«Ընթերցանությունը մի զբոսախնջույք է, որին մասնակցելու համար հեղինակը բերում է բառեր, իսկ ընթերցողը՝ գաղափար»:[2]

Պ. Ռիկեր

[2] Ջ.Գյուլամիրյան, «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», 2015, էջ 102

Ինչպես գիտենք երեխաների կարդալու նախնական կարողությունները ձևավորվում են այբբենական շրջանում: Եվ հենց այս շրջանում սկսվում ենք բացատրական ընթերցանությամբ: Սկզբնական շրջանում ընթերցանությունը ձևավորվում է բարձրաձայն ընթերցանությամբ:

Գոյություն ունի կարդալու հմտության ձևավորման 3 փուլ՝ վերլուծական (երբ կարդալու ամենափոքր միավորը վանկն է կամ հնչյունը), համադրական (երբ ամենափոքր միավորը դառնում է բառը), ավտոմատացված (երբ ամենափոքր միավորը նախադասությունն է):

Սկզբնական շրջանում կրտսեր դպրոցականը կարդում է վանկերը հաճախ կրկնելով: Բանն այն է, որ նա ավելի դանդաղ է ընկալում ընթերցվող նյութը: Ընդհանրապես կարդալու կարողության նպատակը աշակերտին լավ կարդալ սովորեցնելն է: Իսկ ի՞նչ ենք հասկանում լավ կարդալ: Լավ կարդալ նշանակում է կարդալիս պահել կարդալու մի շարք որակական հատկանիշներ, բնութագրիչներ, որոնք սերտորեն կապված են իրար հետ: Այդ հատկանիշներն են՝

. ճիշտ կամ անսխալ կարդալ (երբ երեխան կարդում է այնպես, ինչպես գրված է, բաց չի թողնում ոչ մի տառ, վանկ, արտասանում է բառերը ճիշտ, և այս ամենը ձևավորվում են կարդալու ամենօրյա վարժությունների միջոցով),

. հասկանալով կամ գիտակցորեն կարդալ (երբ երեխան հասկանում է իր կարդացած յուրաքանչյուր բառի, նախադասության և ամբողջ տեքստի իմաստը, կարողանում է ճշտորեն վերարտադրել՝ պահպանելով դեպքերի հաջորդականությունը),

. վարժ կամ սահուն կարդալ (երբ տեքստը կարդացվում է ամբողջական բառերով, առանց անհարկի դադարների, սահուն, խոսակցության արագությանը համապատասխան, որն իհարկե պետք է ձևավորվի նախորդ երկու հատկանիշներից հետո),

. արտահայտիչ կամ գեղարվեստորեն ընթերցանություն (արտահայտիչ կարդալը գեղեցկացնում է լեզուն, խոսքը դարձնում է ավելի պատկերավոր, բարձրացնում է աշակերտների գեղագիտական ճաշակը, դրա համար էլ այն ավելի դժվար ձևավորվող հատկանիշ է, և պետք է ձևավորել սեփական փորձով),

.արագ կարդալ (սա կարդալու այն հատկանիշն է, որը ձևավորվում է լուռ կարդալու ճանապարհով, և տարրական դպրոցի առաջնային խնդիրը չէ, քանի որ արագ ընթերցանությամբ անկարելի է ուսանել լավ կարդալ, իսկ լավ կարդալով

կարելի է ուսանել արագ կարդալ): Այսպիսով, լավ կարդալու համար երեխան պետք է կարողանա կարդալ ճիշտ, հասկանալով, վարժ և արտահայտիչ: Այս բոլոր հատկանիշները ձևավորելու համար մենք պետք է կիրառենք նույն ստեղծագործության բազմակի ընթերցման գործընթացը: Իսկ որպեսզի այն ձանձրալի չլինի աշակերտների համար, պետք է կիրառենք կարդալու բոլոր տեսակները՝ ձայնով, լուռ կամ մտքում, շարունակելով, բացատրելով, մեկնաբանելով, ընտրովի, դերերով:

Ձայնով ընթերցումը իր հերթին կարող է լինել ցածրաձայն և բարձրաձայն: Եթե պահանջվում է օրինակ՝ կարդալ նկարագրություններ, խորհրդավոր մտքեր, փաղաքշանքը, տխրությունը, ապա պետք է սովորեցնենք կարդալ ցածրաձայն, զարգացող գործողությունները, ուրախությունը, զայրույթը, սպառնալիքը՝ բարձրաձայն:

Տարրական դասարաններում շատ կարևոր է լուռ կամ մտքում կարդալը, որը լուրջ աշխատանք է պահանջում: Որպեսզի լուռ կարդալը ունենա ցանկալի արդյունք, պետք է ուսուցիչը դրան զուգահեռ հանձնարարի բարձրաձայն վերարտադրի ընթերցածը: Լուռ կարդալու գործընթացը սկսվում է այն ժամանակ, երբ մեկը կարդում է, իսկ մյուսները հետևում են , որպեսզի շարունակեն: Կարդալու այս տեսակին նախապատրաստելու համար նախ պետք է հանձնարարենք կարդալ շշուկով: Բայց նաև չպետք է մոռանանք, որ լուռ կարդալը արդյունավետ է, եթե աշակերտը բարձրաձայն ընթերցանության կարողություն ունի:

Շարունակելով կարդալը ևս մեծ նշանակություն ունի, որովհետև միաժամանակ կարդում է ամբողջ դասարանը: Իհարկե պետք է հաշվի առնենք այն հանգամանքը, որ ընդհատել և շարունակել կարելի է հանձնարարել այն ժամանակ, երբ կա ստեղծագործության տրամաբանական ավարտ: Ավելի ուշ կարելի է հանձնարարել կարդալ ամբողջական հատվածներ՝ յուրաքանչյուր հատվածից հետո կատարելով մեկնաբանություն և բացատրություն: Սա օգնում է ամբողջապես թափանցելու բովանդակության մեջ, ըմբռնել հերոսների էությունը, հասկանալու պատճառահետևանքային կապերը: Վերլուծական-համադրական, քննադատական մտածողության զարգացմանը նպաստում է ընտրովի ընթերցանությունը: Սա նաև ստուգում է երեխաների ուշադրությունը, ստիպում է երեխաներին ընթերցել լուռ, որպեսզի գտնի պահանջվող բառը , բառակապակցությունը, նախադասությունը կամ միտքը: Այս դեպքում ցանկալի է, որ նախօրոք ունենանք այն հարցաշարը, որոնց պատասխանները պետք է գտնի աշակերտը:

Օրինակ՝

– Ընթերցե՛ք ձեզ դուր եկած հատվածը:

– Կարդա՛լ այն հատվածը, որտեղ նկարագրվում է անտառը:

– Ինչպիսի՞ն էր հեքիաթի հերոսուհին, հիմնավորել պատասխանը՝ ընթերցելով համապատասխան հատվածը:

Ընտրովի ընթերցանությունից հետո պետք է ծանոթացնել դերերով ընթերցանությանը: Նախ պետք է երեխաները հասկանան, թե քանի հերոս կա՝ չմոռանալով հեղինակին: Դերերով կարդալուց առաջ նախ աշակերտները պետք է կարողանան լավ և հասկանալով կարդալ: Այս դեպքում ցանկալի է վերցնել այնպիսի ստեղծագործություններ, որոնք հարուստ են գործող անձերով, որպեսզի շատ աշակերտներ ընդգրկվեն:

Այսպիսով, տարրական դասարաններում բնագրի ընթերցման նկատմամբ սերը մեծապես կախված է հենց մեր՝ ուսուցչի առաջին ընթերցումից, թե ինչպես է այն տեղ հասնում երեխաներին: Որից հետո, օգտագործելով ընթերցանության վերը նշված տեսակները, պետք է շեշտը դնենք միևնույն նյութի բազմակի ընթերցման վրա:

Բառային աշխատանք

Բառը լեզվի նվազագույն և կարևոր միավորն է: Այն հնչյունը կամ հնչյունախումբը, որն ունի առանձին գործածություն և իմաստ, կոչվում է բառ: Բառերը միավորվելով՝ ստեղծում են լեզվի ավելի մեծ միավորներ՝ բառակապակցություն, նախադասություն: Բառը առանձնանում է լեզվական մյուս միավորներից նրանով, որ ինքնուրույն կարող է արտահայտել առանձին ամբողջական իմաստ և հասկացություն: Որքան հարուստ է մարդու բառապաշարը, այնքան մարդը ավելի ընդարձակ է կարողանում ներկայացնել իր հիմնավոր, տրամաբանված մտքերը: Ելնելով տարրական դասարանների չափորոշչային պահանջներից՝ պետք է իմանանք, որ այս տարիքում բնագրի շուրջ կատարվող բառային աշխատանքը ավելի շատ պետք է լինի գործնականորեն: Այսինքն՝ ստեղծագործության շուրջ կատարվող բառային աշխատանքի նպատակն է նորածանոթ բառերի ու բառակապակցությունների բացատրությունը, ծանոթ բառերի հոմանիշների և հականիշների գրառումը, տեքստի ուղղագրական արժեք ներկայացնող բառերի դիտարկումը՝ հիշելով անցած ուղղագրական կանոնները...

Տարրական դասարաններում անծանոթ բառերի բացատրման արդյունավետ և հիշվող միջոցներից են գնական պարագաները, երբ նախօրոք ցուցադրվում է առարկան, իրը, երևույթը, իսկ հետո լսում են անունը կամ հակառակը: Առավել պարզ և գործածական միջոց է այդ ամենը նկարներով փոխարինելը:

Բառային աշխատանքի ժամանակ բառերի բացատրումը կատարվում է նաև դրանք իրենց հոմանիշներով փոխարինելով : Իսկ եթե տեքստի մեջ հանդիպում են բազմիմաստ բառեր, ավելի տեղին է բացատրել միայն այն իմաստը, որով գործածված է տեքստի մեջ: Համոզվելու համար՝ արդյոք հասկացել են բառերի իմաստները, դրանք կարելի է օգտագործել խոսքի մեջ՝ կազմելով բառակապակցություն, նախադասություն, պատմություն և այլն: Նորածանոթ բառերը այնքան պետք է օգտագործեն խոսքում, մինչև դրանք դառնան երեխայի սեփականությունը, պասիվ վիճակից տեղափոխվեն ակտիվ վիճակի:

Ընթերցած ստեղծագործության շուրջ կատարվող բառային աշխատանքը ունի հետևյալ քայլաշարը.

. անծանոթ բառերի բացատրություն

. աշխատանք ուղղագրական արժեք ներկայացնող բառերի շուրջ

. խոսքի մեջ նորածանոթ բառերի ակտիվացում

Ընդհանրապես բառապաշարի հարստացումը շարունակական գործընթաց է: Մարդը մինչև իր կյանքի վերջը անընդհատ կիրառում է նոր բառեր, քանի որ շրջակա աշխարհը ճանաչելու և ընկալելու գործընթացը ևս շարունակական է :

Երեխաների բառապաշարի հարստացման գործընթացներից մեկն էլ սովորած բնագրերի համապատասխան թեմավոր խոսքերի, փոխաբերական մտքերի օգտագործումն է, որոնց վրա պետք է առանձնակի ուշադրություն հատկացնել:

Բառակապակցությունը որպես բառային աշխատանքի

կարևոր բաղադրիչ

Բառակապակցությունները նախադասության ձևավորման գործընթացում ներկայացվող մտքերն են. երեխաներին սովորեցնել ճանաչել և կազմել բառակապակցություններ, նշանակում է աշխատանք տանել մտքի բաղադրամասերի շուրջ:

Երեխաները պետք է հասկանան, որ բառակապակցությունները միայն նախադասության մեջ են հանդես գալիս որպես լեզվական հաղորդակցման միջոց:

Այսինքն, երեխաները հենց սկզբից պետք է բառակապակցությունները կիրառեն նախադասությունների մեջ, ոչ թե՝ բառը գործածել բառակապակցությունների մեջ:

Բառակապակցության ըմբռնման գործընթացը կատարվում է մի քանի քայլով.

. տեքստից բառակապակցությունների առանձնացում, դրանք խոսքում գործածելու կարողության ձևավորում,

. բնագրի մեջ գործածված բառակապակցությունների իմաստային ընկալում և իմաստավորում,

. արդեն ծանոթ բառակապակցությունների միջոցով հերոսների, կերպարների, երևույթների նկարագրում,

. բառակապակցության արտասանական երանգավորման տարատեսակների որոշում և ճիշտ, արտահայտիչ խոսքի կառուցում,

. տվյալ տարիքին համապատասխան շարահյուսական գիտելիքների և կարողությունների ուսուցման յուրացում:

Այսպիսով, հասկանալով կարդալու հիմքում ընկած է «բառակապակցություն» լեզվական միավորի յուրացումը:

Աշխատանք բնագրի շուրջ

Վատ ուսուցիչը ճշմարտությունը մատուցում է,

լավ ուսուցիչը սովորեցնում է այն գտնել:

Ա. Դիստերվեգ [3]

Ինչպես արդեն վերևում նշվեց ընթերցանությունը մի գործընթաց է, որը հաճախ ոչ բոլորին է գրավում, հատկապես կրտսեր դպրոցական տարիքում: Իհարկե կան երեխաներ, ովքեր սիրով, պարտաճանաչ կատարում են ուսուցչի տված հանձնարարությունները: Սակայն անգամ կարդացող երեխաների մեծ մասը ոչ միշտ են մտորում կարդացած բնագրի շուրջ, նույնիսկ բազմակի ընթերցանության դեպքում: Այսինքն՝ աշխատանքը դառնում է ոչ արդյունավետ, եթե չկա վերլուծական աշխատանք: Ընթերցանությունը

[3] Ջ. Գյուլամիրյան, «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», 2015, էջ 120

դառնում է ճանաչողական աղբյուր, եթե տարաբնույթ աշխատանքների շնորհիվ երեխան մտնում է բնագրի տարբեր շերտերի մեջ: «Աշխատանք բնագրի շուրջ» բաղադրամասի նպատակը հենց նա է, որ երեխան ոչ միայն ընթերցի նյութը, այլ կարողանա խմաստավորել իր կարդացածը: Շատ կարևոր է նախապես մշակած հարցերի բովանդակությունը: Դրանք կարող են վերաբերել թե՛ վերնագրին, թե՛ բուն բնագրին և թե՛ ամփոփմանը: Նախ պետք է սկսել կարդացած բնագիրը հասկանալուց: Իհարկե առաջին ընթերցումից հետո դա ամբողջությամբ ապահովել հնարավոր չէ: Պետք կենտրոնանալ յուրաքանչյուր բառի, ապա դեպքի, մտքի, խոսակցության, նկարագրության, տեղեկատվության վրա:Կենտրոնացման համար պետք է կիրառել տարբեր առաջադրանքներ, օրինակ՝

. կարդալ բնագիրը, ամբողջացնել տրված բառերից ցանկացածով,

. հորինել բնագրի ավարտ, սկիզբ կամ կենտրոնական նոր հատված,

. կազմել հարցաշար բնագրի բովանդակության շուրջ,

. որ ստեղծագործությունը կարելի էր վերնագրել այս նույն վերնագրով և այլն:

Այսպիսի աշխատանքները նպաստում են աշակերտների մտքի ճկունությանը, հետաքրքիր մտքեր արտահայտելու կարողության զարգացմանը:

Հասկանալով կարդալու կարողության զարգացման համար երեխան պետք է հասկանա ընթերցած ստեղծագործության դեպքերը, կռահի հեղինակի կողմից չներկայացվող մտքերը, կարողանում է առանձնացնել հիմնական միտքը, հերոսների զգացմունքները, երկխոսության մեջ մտնել հեղինակի և կերպարների հետ:

Բնագրի շուրջ աշխատանքի մյուս կարևոր պայմանը վերլուծական-համադրական ունակության զարգացումն է: Կան երեխաներ,ովքեր կարողանում են վերլուծել բնագրի դեպքերի հաջորդականությունը՝ առանց բաց թողնելու որևէ մանրուք:Այդպիսի երեխաների մոտ զարգացած է վերլուծական ընկալումը: Կան նաև համադրական ընկալում ունեցող երեխաներ, ովքեր ամբողջ նյութը ընկալում են ընդհանրացված, ամբողջության մեջ, առանց մանրուքները հիշելու: Փորձը ցույց է տվել, որ տարրական դասարաններում ավելի շատ գերակայում է վերլուծական ընկալումը, որին նպաստում են ընթերցանության շուրջ վերևում քննարկված աշխատանքները, տարաբնույթ հարցերը, որոնք կստիպեն դուրս գալ մակերեսային մտածողությունից դեպի ոչ ստանդարտ մտածողություն:

Փորձը ցույց է տվել, որ երբ երեխաներին ընթերցանության ժամանակ տրվում է ազատ մտածելու, արտահայտվելու հնարավորություն, երբ արժևորվում է յուրաքանչյուր կարծիք և հիմնավորում,

երեխաները ավելի մեծ հետաքրքրություն են ձեռք բերում ընթերցվող նյութի նկատմամբ: Այսինքն պետք է զարգանա քննադատական մտածողությունը: Դրան դարձյալ նպաստում են այնպիսի հարցերի ուղղումը, որոնց պատասխանները անպայման պիտի քննարկվեն, օր.՝ ի՞նչը դուր եկավ տեքստի մեջ, ինչո՞ւ պետք է արդարացնել հերոսի արարքը, ինչը՞ դուր չեկավ բնագրի վերջում, ինչպե՞ս կփոխեիք...

Ընթերցած ստեղծագործության բովանդակության պատմում

Մայրենիի դասի կարևորագույն նպատակներից մեկը բնագրի պատմումն ու վերարտադրումն է : Պետք է խիստ ուշադրություն դարձնել, թե ինչպես է ընթանում այս գործընթացը սկզբնական շրջանում, քանի որ շատ ժամանակ կարդացածի բովանդակությունը վերարտադրում են անգիր և չեն ըմբռնում իմաստը, գլխավոր միտքը: Պատմելուն նախապատրաստող աշխատանքը պետք է սկսվի հարցաշար կազմելուց, իսկ որպեսզի աշխատանքը լինի արդյունավետ, հարցերը պետք է մշակել նախապես:

. Պետք է նախ տրվեն այնպիսի հարցեր, որոնք նպաստում են կարդացած ստեղծագործության բովանդակության, կերպարների բացահայտմանը:

. Ապա պետք է ուղղել այնպիսի հարցեր, որոնք երեխաներին կստիպեն մտածել ստեղծագործության հիմնական մտքի, գաղափարի, ենթատեքստի շուրջ, կձևավորի սեփական կարծիք երևույթների, կերպարների արարքների մասին:

. Հարցերը պետք է ակնկալեն ընդարձակ, գեղեցիկ նախադասություններով պատասխաններ, միաժամանակ պետք է լինեն հակիրճ մտքեր՝ չշեղվելով բուն բովանդակությունից:

. Միաժամանակ մի քանի հարց չպիտի տալ, իսկ վերջում ուղղել հարցեր, որոնք կտանեն դեպի եզրահանգումների և ամփոփման:

Որպեսզի երեխաների համար պատմելը լինի հետաքրքիր, պետք է օգտագործենք պատմելու տարբեր տեսակներ՝ մանրամասն կամ ընդարձակ պատմել, համառոտ պատմել, ընտրովի պատմել, ձևափոխված պատմել, ստեղծագործաբար պատմել, շարունակելով պատմել, պատմել որպես հերոս կամ որպես ականատես և այլն:

Պատմելու բոլոր տեսակներն էլ ունեն իրենց առանձնահատկությունները, և երբ երեխաները յուրացնում են վերը նշված բոլոր տեսակները, կարելի է անցնել դերերով պատմելուն կամ բեմականացմանը: Քանի որ պատմելու գործընթացը պետք է սկսենք հարցաշար կազմելով, ապա երեխաներին պետք է աստիճանաբար սովորեցնել ինքնուրույն կազմել այդ հարցաշարը:Երեխաների գիտակցությանը պետք է հասցնել, որ հարցաշարը կարդացած բնագրի բովանդակության հակիրճ

գրառումն է, որի յուրաքանչյուր կետ համապատասխանում է կարդացած ստեղծագործության, ենթաթեմաներին:

Ստուգելու համար՝ արդյո՞ք հասկացել են ընթերցած նյութը, պետք է ծանոթացնել հարցաշարին և պատասխանել դրանք: Հարցաշարը կարող են կազմել ինչպես հարցական, այնպես էլ պատմողական նախադասություններով:

Ամփոփում

Ընդհանրապես ցուրաքանչյուր ստեղծագործություն, թեմա կամ նյութ ավարտում ենք ամփոփումով: Դա կարող է լինել դասի ընթացքում երեխաների կատարած աշխատանքի ամփոփում, կարող է լինել պարզապես ամփոփման դաս: Ցանկացած ամփոփում կամ կշռադատում պետք է լինի ոչ ստանդարտ ֆորմատի, այսինքն՝ երեխաները պետք է հնարավորինս շատ մտածեն, եզրակացություններ անեն, ստեղծագործեն, հատկապես ամփոփման դասերի ժամանակ: Իսկ ինչ պետք է պահանջել ամփոփման ժամանակ:

. Երեխաները պետք է կարողանան ցույց տալ ուսումնասիրած նյութից ստացած տեղեկությունները նորովի կիրառելու ունակությունները:

. Պետք է կարողանան կիրառել նյութից սովորած հնարավորինս մեծ թվով նորածանոթ բառեր, դարձվածքներ, հետաքրքիր արտահայտություններ:

Ամփոփման հիմքում ընկած է տարաբնույթ հարցադրումը և բոլոր դեպքերում պետք է լինի աշակերտակենտրոն ամփոփում: Նույն ամփոփման ժամանակ կարելի է կիրառել տարբեր փոխգործուն մեթոդներ՝ «Քառաբաժան», «Դեմ-կողմը»...

Ամփոփման դասերը իրենց մեջ կարող են ունենալ նաև կրկնության բաղադրիչներ, որոնք հիմնականում կազմակերպվում են թեմատիկ խմբի կամ որևէ թեմայից հետո՝ սովորողների ձեռք բերած գիտելիքներն ամբողջությամբ ամփոփելու համար:

Այսպիսով, ամփոփման դասերի ժամանակ պետք է ամփոփել ոչ միայն մայրենիից երեխաների ձեռք բերած գիտելիքները, այլև բնության, հասարակության,մարդկային հարաբերությունների մասին եղած գիտելիքներն ու հմտությունները:

Եզրակացություն

Միջնադարում կարդալու ունակությունը համարվում էր ազնվական մարդկանց առանձնաշնորհումը: Եվ միայն ամենահարուստ ընտանիքը կարող էր իր տանը գիրք ունենալ: Մաքսիմ Գորկին ասել է. «Գիրքն արժե սիրել, այն կհեշտացնի կյանքը»:[4] Ժամանակի ընթացքում գրքերը, ընթերցանությունը դարձան մարդու անհատականությունը ձևավորող հիմնական գործոնները: Մեր օրերում ընթերցանության ուսուցումը դիտվում է իբրև անձի դաստիարակության և զարգացման հիմնական միջոց: Հետևաբար այն պետք է ապահովի կայուն գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ուսումնական նյութի ինքնուրույն ընթերցման առումով և հնարավորություններ ստեղծի կարդացածի գործուն ընկալման համար:

Այսպիսով, հետազոտությունների արդյունքում եկել եմ հետևյալ եզրակացություններին.

. մայրենիի ուսուցման կարևոր նպատակներից մեկը տարրական դասարանի ընթերցանությունն է՝ որպես օրինակելի և կանոնավոր խոսքի ընդօրինակման, գիտելիքների հայթայթման , բառապաշարի հարստացման ու մտահորիզոնի հարստացման միջոց,

.գիտակցելով կարդալու, ընթերցելու այսչափ կարևորությունը՝ ուսուցիչը պետք է մշտապես հետևի վերևում նշված բոլոր կետերի իրականացմանը,

.կրտսեր դպրոցականների հետ տարվող ընթերցանության մեթոդները պետք է լինեն բազմաբովանդակ, պարզ, հետաքրքիր, ճկուն,

.բացատրական ընթերցանության, որը ինչպես տեսանք ընթերցանության հիմքն է, բոլոր բաղադրիչները փոխկապակցված են և անպայման պետք է իրականացնել ըստ հաջորդականության,

. ի վերջո, եթե ուզում ենք ունենալ կիրթ, ընթերցող և 21-րդ դարի պահանջներին համապատասխանող սերունդ, ինքներս պետք է օրինակ լինենք նրանց համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ջ. Գյուլամիրյան, «Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա», 2015

2. Ջ. Գյուլամիրյան, «Սովորողների վերլուծական-համադրականգործունեությունը զարգացնող կրթության հիմնական գործոն» հոդված, «Մանկավարժական միտք» 2008, թիվ 2-3, էջ 33-38

3.Ա. Տեր-Գրիգորյան, «Հայոց լեզվի մեթոդիկա», 1980

[4] https://umi-kumi.ru/hy/your-business/problema-zainteresovannosti-chteniya-argumenty-na-temu-literatura/

4. Ջ. Գյուլամիրյան, «Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում», 1998

5.ԿՁՆԱԿ հիմնադրամ(Ն. Ղումաշյան, Ա. Բալայան, Վ. Հովսեփյան, Ն. Մնացականյան, Վ. Խաչատրյան, Տ. Մարաբյան, Ի. Աբրահամյան, Ա. Ազատյան), «Ընթերցանությունը տարրական դպրոցում» մեթոդական ուղեցույց, 2021

6. Ս. Խաչատրյան, Տ. Սարդարյան, Ա. Սարգսյան, Ա. Հայդարցյան, Ա. Մամյան, Լ. Միրզոյան, Ա. Սարգսյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Մարտիրոսյան, Ս. Հովսեփյան, Գ. Ղարագյոզյան, «Ուսուցման արդյունավետ հնարներ», 2020